ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/44

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Դրուզյա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Խ. Մանուկյանի (լիազորագիր՝ տրված 22.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.02.2021թ. թիվ 26/26/1850-2021 գրությամբ «Դրուզյա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 09.02.2021թ. թիվ 1/18-2/6516-2021 գրության հիման վրա 11.02.2021թ. թիվ 26/26/1850-2021 գրությամբ նախաձեռնել է «Դրուզյա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Դրուզյա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Դրուզյա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «Դրուզյա» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժիններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դրուզյա» ՍՊԸ-ն, ունեցել է ֆինանսական դժվարություններ, որոնք մրցույթին մասնակցելու պահին դեռևս կանխատեսելի չէին ընկերության համար, որի արդյունքում հնարավորություն է ունեցել հայտի ապահովում ներկայացնել միայն 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների համար, իսկ 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով չի ներկայացրել ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/44 ընթացակարգի շրջանակներում 22.02.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.02.2021թ. թիվ 1/18-2/6516-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 21.01.2021թ. հայտարարել է ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1 ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու հայտ է ներկայացրել «Դրուզյա»ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 29.01.2021թ. հայտերի բացման նիստում արձանագրել է, որ նշված ընկերության կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես հայտում բացակայում են հայտի ապահովումները:

Վերոնշյալ անհամապատասխանությունները շտկելու համար նույն օրը ընթացակարգը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և մասնակիցներին առաջարկվել է հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

02.02.2021թ. գնահատող հանձնաժողովը պարզել է, որ «Դրուզյա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում անհամապատասխանությունները շտկել է մասնակի. մասնավորապես ներկայացրել է հայտի ապահովում միայն 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, իսկ 1-ին, 3-րդ, 4-րդ, և 7-րդ չափաբաժինների մասով չի ներկայացրել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Դրուզյա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/44 ընթացակարգի շրջանակներում 22.02.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/44 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/44 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Դրուզյա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դրուզյա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.01.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դրուզյա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները մասնակի. մասնավորապես ներկայացրել է հայտի ապահովում միայն 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, իսկ 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով չի ներկայացրել:

8. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Դրուզյա» ՍՊԸ-ին 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու, իսկ չշտկված անհամապատասխանությունների մասով Ընկերության վերաբերյալ նյութերը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.02.2021թ. թիվ 26/26/1850-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 09.02.2021թ. թիվ 1/18-2/6516-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար բնակտարածությունների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Դրուզյա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Դրուզյա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.01.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Դրուզյա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները մասնակի. մասնավորապես ներկայացրել է հայտի ապահովում միայն 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով, իսկ 1-ին, 3-րդ, 4-րդ և 7-րդ չափաբաժինների մասով չի ներկայացրել:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Դրուզյա» ՍՊԸ-ին 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու, իսկ չշտկված անհամապատասխանությունների մասով Ընկերության վերաբերյալ նյութերը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Դրուզյա» ՍՊԸ-ին 6-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու, ***իսկ չշրկված անհամապատասխանությունների մասով Ընկերության վերաբերյալ նյութերը, առանց Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան «Դրուզյա» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Դրուզյա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.02.2021թ. թիվ 26/26/1850-2021 գրությամբ «Դրուզյա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**